ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.06.2021թ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/51 ԲՈՂՈՔԸ, ՈՐՊԵՍ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՁԵՌՆՎԱԾ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի կողմից 22.06.2021թ.-ին ներկայացված՝ բողոքից հրաժարվելու մասին գրավոր միջնորդությունը և ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» մասին կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի դրույթների պահանջով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքից հրաժարվելու մասին գրավոր միջնորդությունը բավարարել՝ Կարգի 22-րդ կետի դրույթների հաշվառմամբ:
2. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/51 բողոքը համարել որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ՝ վերջինիս ներգրավվելով որպես երրորդ կողմ:
3. Բողոքի քննման և որոշման կայացման ընթացակարգը շարունակել:

4. Սույն որոշումը ծանուցել բողոքի քննությանը ներգրավված կողմերին՝ այն որպես հայտարարություն հրապարակելով տեղեկագրում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**